ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ք. Երևան, Մոսկովյան 1 հեռ. 596-391

«10» 06 2009 թիվ 7/1-2897

Ձեր թիվ

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
աշխատակազմի ղեկավար
պարոն՝ Լ.Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան.

Ի պատասխան Ձեր 10.06.2009թ. թիվ 05-274 գրության կից տրամադրվում է ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչության վարույթում քննվող թիվ 61202009 քրեական գործով տեղեկանքը:

Առդիր՝ տեղեկանքը «1» թերթից:

Հարգանքով
ոստիկանության գեներալ- մայոր Գ.Ս.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետություն
Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Մտից № 558
«10» 06 2009 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Թիվ 61202009 քրեական գործով

2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Ազատության հրապարակում, Մյասնիկյանի արձանի և Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքում, Գր.Լուսավորիչ, Մաշտոց, Լեո և Պարոնյան փողոցներում տեղի ունեցած հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության և դրանից անջատված մասերով դատաքննությունների ընթացքում մի խումբ անձինք, տեղեկանալով տարբեր վկաների կողմից տրված մեղադրող ցուցմունքների մասին, մեկ միասնական դիտավորությամբ և միևնույն եղանակով՝ վկաների ու նրանց մերձավորների նկատմամբ ահաբեկումներով, առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքներով վկաներին հարկադրել են սուտ ցուցմունքներ տալ և հրաժարվել հանցագործությունների կատարման մեջ մերկացնող հիշյալ ցուցմունքներից:

Վկաներին սուտ ցուցմունք տալուն հարկադրելու դեպքերի առթիվ ՀՀ գլխավոր դատախազությունում 15.05.2009թ. ՀՀ քր. օր-ի 340 հոդ. 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է N 61202009 քրեական գործը:

20.05.2009թ. թիվ 61202009 քրեական գործը ընդունվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչության վարույթ և կատարվում է նախաքննություն:

Գործով վկա Շավարշ Մանուկյանին սուտ ցուցմունք տալուն հարկադրելու 2009թ. մայիսի 28-ի դեպքի հանգամանքները տեսանկարահանող, ականատես վկա՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Գառնի փողոցի 6 շենքի 51 բն. բնակիչ Արտուշ Մնացականի Սերոբյանի բնակարանում 30.05.2009թ. ժամը 09-^{30}-ից մինչև 10-^{20}-ը դատարանի համապատասխան թույլտվությամբ կատարվել է խուզարկություն, որի ժամանակ վերջինս ներկայացրել է «Սամսունգ» տեսակի ձայնագրիչը և «Սոնի» տեսակի տեսաժապավենը, որի վրա կատարված են եղել քրեական գործի համար նշանակություն ունեցող դեպքերի նկարահանումները:

Նույն օրը Արտուշ Սերոբյանը որպես վկա հարցաքննվելու համար հրավիրվել է ՀԿԳ քննության վարչություն, որտեղ ներկայացել է ժամը 11-^{30}ի սահմաններում և հայտարարել է, որ ինքը Երևանի ավագանու ընտրությունների թիվ 2/10 տեղամասային հանձնաժողովի անդամ է, ժամը 12-^{00}-ին կայանալու է հանձնաժողովի նիստը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ժամը 11-^{40}-ին հարցաքննությունը ընդհատվել է և անմիջապես Ա.Սերոբյանը դուրս է եկել ՀԿԳ քննության վարչության շենքից:

Արտուշ Սերոբյանը քրեական գործով որպես վկա հարցաքննվել է 2009թ. հունիսի 2-ին:

Նախաքննությունը շարունակվում է:

ՀԿԳ քննության վարչություն բաժնի
պետ, ոստիկանության փոխգնդապետ Ս.Գ.Ավետիսյան